




ԵՐԲԱՅԵԱՆ ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՏՆՐԻ

ԵՐԵՎԱՆԻ ՏՆՐԻ

ԹԻԻ 107

9 ՕԴՈՍՏՈՅ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԼԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՆԵՒ

ԵՐԵՎԱՆԻ
ՏՆՐԻ
ԿԵՆՏՐՈՆ



ԿԱԹՈՂՈՍԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԱՆԹԱՆԻՐԹ

Երրոնդ տարի 9 Օգոստոս 1913 թիւ 107

«Մերազան Քաճաճայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Առնազանց շարքաթերթը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Մերազան Հայրն ուրազին կ'օրհնէ յիշեալ Շարքաթերթը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մէրի Տէյ Վալի, Կաթ. Ս. Պօղոս Պետրոս Ժ. Թեղեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Պիլիկիոյ 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուտնամարտ:

ԴԵՊՅԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ԱՆԻՐԱԽ ԽԾԻՆՈՒՆԻՔ

Աւագ թեմիս Հայ-Կաթողիկէ կղերը իր տարեկան հոգեւոր Ս. Կրթութիւնը կատարեց:

Ս. Կրթութիւնը Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ ընդունուած և գործադրուած ամենէն օգտակար և ամենէն հիմնալի հոգեւոր հրահանգն է: Այդ Ս. Հրահանգը մի միայն Ս. Կաթողիկէ Եկեղեցւոյ առանձնայատուկ հատկութիւնն է, իբր երկնաւոր պտուղ մը իւր Աստուածային անսպառ և բարոյացողիչ ձգնարտութեան ու հոգեւոր սնահատնութեան Գանձին, զոր Մարդացեալ Որդին Աստուծոյ կտակեց իրեն: Այդ սրբաշնորհը

Հրահանգը հետեւողութիւնն է Քրիստոսի Տեառն մերոյ անսպառ քաշուելուն, իր առաքեալները՝ աշխարհիս նոյն իսկ առաքելական հոգերէն հանգչելու և իրենց հոգեւոր փրկութեան վրայ աւելի ներանձնացումով խորհելու համար անսպառ տանելուն, Առաքելոց՝ վերնատան մէջ տաան օր աղօթքով առանձնացած Հոգեւոր Սրբոյ գալստեան սպասելուն, և Ս. Հարց և առ հասարակ ամէն սուրբերու մեկուսացած ապրելուն և ճգնումներուն: Այս սրբաշնորհ Հրահանգներուն այժմեան ձեւով կատարումը հաստատեց Ս. Իգնատիոս Լոյոլա, աստուածազգեցիկ ներշնչումով. և այն օրէն ի վեր Ուղղափառ Ս. Եկեղեցին ընդգրկեց և ծաւալեց այս հոգեւոր մարդանքը, առանձնացումը, և անկէ անթիւ անհամար հիասքանչ պտուղներ քաղեց: Իրենց Աստուծոյն հետ մինակ մնացած մեղաւոր հոգիները՝ փղձկեցան, Անառակի պէս դարձի

եկան, զգաստացան, Աստուծոյ Ս. Կամբը և իրենց պարտքերը կատարելու նուիրուեցան, արքայութեան որդիք եղան. իրենց Աստուծոյն հետ առանձին մնացած արգար հոգիները՝ սիրով այրեցան, տոշորեցան, տատրակի պէս հեծեցին աստուածային միաւորութեան ետեւէն, կաթիլի մը պէս վազեցին միանալու Սիրոյ անհուն Ովկիանոսին, և ասպարէզներով յառաջագէժ նկրտեցան քրիստոսոնէական կատարելութեան ճամբուն մէջ. Ս. Եկեղեցիի բուրաստանը քնքուշ և չքնաղ ծաղիկներով լեցուեցաւ. Ս. Կրթութիւնը հոգւոյ հացն է, զոր Քրիստոս կը բազմապատկէ ու կը բաշխէ աշխարհիս վրայ անօթի տուայտողներուն, բայց երբ իր աստուածային խօսքերը մտիկ ընելու համար իր ետեւէն անապատ քաշուին, առանձնանան. Ահա ինչո՞ւ համար ամենամեծ սուրբերը, ինչպէս Ս. Ֆրանչիսկոս Սալեզացի, Ս. Լիւկուորի, Քիւրէ՛տ՝Արս, և այլք ո՛չ միայն գովեցին միշտ ու գործադրեցին, այլ նաեւ անդադար քարոզեցին Ս. Կրթութիւնները. ահա ինչո՞ւ համար Ս. Եկեղեցին՝ կաթողիկէ աշխարհին մէջ, ամէն քաղաք և աւան, տարին գոնէ՛ միանգամ քարոզել կու տայ զայն ութ օր շարունակ. ահա ասոր համար է որ Ս. Եկեղեցին պարտադրեց զայն մանաւանդ կղերական դասուն, կատարելու համար զայն՝ գո՛նէ տարուան մէջ միանգամ:

Ահա՛, ուրեմն, այս պարտաւորութիւնն է զոր վերջերս կատարեց հայ կաթողիկէ կղերը, կարգադրութեամբ իր օրինաւոր հովուին, և այդ պարտաճանաչ կղերը անհունապէս ուրախ է այս մեծ հոգեւոր բարիքին համար զոր իր հոգեւոր Պետը այսքան հոգածութեամբ և հայրական խնամով ընձեռեց իրեն, և այս մեծ բարիքին համար իր խորապէս զգացուած ուրախութիւնը յայտնեց անոր՝ շնորհակալութեան աշխիւ շեշտերով:

Բայց մեր քով ամէն բան կը քննադատուի, ամէկ բան խճճմանքի, բամբասանքի առարկայ կ'ըլլայ. Հայը, ամէ՛ն Հայ, առանց բացառութեան, գիտուն է, փիլիսոփայ է, աստուածաբան է, խոհեմ և իմաստուն է. ամէ՛ն հայ մեծաւոր է, դատաւոր է՝ անբու-

ղոքելի, օրէնսդիր է՝ անդիմադրելի. ա՛յսքան մեծ է Հայը. կարծես չկայ Հայ մը՝ հրպատակ, անմասնագէտ, սահմանափակ. Որչափ իրաւունք ունի եղիւր ո՛վ որ ըսեր է Սուլթան Մահմուտի թէ, վախ չկայ բնաւ որ հաստատուի հայ Իշխանութիւն մը, զի պիտի չկարենայ գտնուիլ Հայոց մէջ Նախարարապետ մը, որովհետեւ ամէնքն ալ պիտի ուզեն անպատճառ... Իշխանն ըլլալ:

Ուստի քննադատեցին նաեւ քահանայից Ս. Կրթութիւնը, այլեւայլ տեսակէտներով, իւրաքանչիւր ըստ քմաց:

Ոմանք՝ էականապէս. սնօգուտ, ծաղրելի և նոյն իսկ նուաստացուցիչ գտան այս տեսակ սովորութիւն մը. Այսպիսիները Եկեղեցւոյ, հոգեւոր բաներու և հոգւոյ փրկութեան վրայ անտարբերնքն են. Հնար է՝ միայն անունով Կաթողիկէ՛ են. ո՛չ Խոստովանանք, ո՛չ Հաղորդութիւն, ո՛չ Եկեղեցի... բայց քաջ քննադատներ կամ լաւ եւս՝ քաջ զըրպարտողներ են. իրենք չեն մտնէր. մտնողներն ալ արգելուկ կ'ուզեն. Լաւ կ'ըլլար որ այսպիսիները լուռ կենային. ցածութիւն է ուրիշներու համոզումը՝ իբր այն, վիրաւորել, երբ փոխանակ փաստի չբերուիր եթէ ոչ ունայնաբանութիւն, տգիտական յարձակում և նախատինք. Սրդէն ի՞նչ փաստ կրնային բերել. դարերու անհաւատութիւնը պարպեց աստութեան սոփիստութիւնները և անանկացաւ՝ իր ամենէն պիտուն կարծուող ներկայացուցիչներուն մէջ իսկ. այժմեան անուս իմաստակները ի՞նչ փաստ կրնային ուրեմն ունենալ...

Ուրիշներ խճճեցին մանրամասնութիւնները. Ըսին. Ի՞նչ հարկ կար հիմա, այս խրոտութեան ժամանակ քահանայից Ս. Կրթութիւն ընել տալու. հիմա, այս տաքերու ատեն... Ի՞նչ հարկ կար լատին քահանայի մը քարոզութեամբ ընելու. Լատիններու վերաբերեալ չէնքի մը մէջ ընելու. Եւ քանի որ այսպէս է, ուրեմն ընել տուողը յետին գաղափարով, ի ցայցս մարդկան միայն ընել կու տայ կոր. իսկ ընողները՝ բռնի, ակնածութեամբ, առ երկիւղի, վաւն ահի՛ն Հրեից, կեղծաւորութեամբ կ'ընեն կոր... ևն...

Ի՞նչ կրնանք ըսել . մէն մի Հայ՝ մէն մի Պղտոտն . կրնանք արդեօք համարձակել խորին խոնարհութեամբ դիտել տալու թէ այդ սեռակ յառաջադիրքե (premisses) այդպիսի ահագին և այլանդակ հետեւութիւն մը հանողները և ո՛չ իսկ շրթունքով հպած են տրամաբանական իմաստութեան բաժակին . կա՛մ տգիտաբար իրենք զիրենք կը խաբեն , — ուստի եւ խոսելի՜ բանակութիւն են . և կամ գիտմամբ կ'ուզեն ուրիշները խաբել , — ուստի և վատ են և անարժան :

Մենք պիտի չզգուցիրենք ո՛չ ժամանակի , ո՛չ եղանակի , ո՛չ տեղւոյ և ո՛չ՝ մանաւանդ , հոգւոյ դաղտնիքը յանդգնաբար որակող առարկութեանց առջեւ . Աստուած պաշտելի է և հոգւոյ փրկութիւնը ինդրելի՜ թէ՛ ի խաղաղութեան , թէ՛ ի խռովութեան , մանաւանդ թէ ի խռովութեան . Աստուած երկրպագելի է և երկնից արքայութիւնը փափաքելի՜ թէ՛ ցուրտի և թէ՛ տաքի մէջ . Աստուած սիրելի է և մահը խորհելի՜ թէ՛ ի ցամաքի և թէ՛ ի ծովու , թէ՛ ի Թուրքիա և թէ՛ ի Փրանկիստան , թէ՛ Հայ , թէ՛ Յոյն և թէ՛ Լատին յարկի մը ներքեւ . ո՛չ , ո՛չ . պատասխանի արժանիք է այն մարդը որ ամէն բարի և ամենաբարի իսկ պործի մէջ յետին մտածում մը կը տեսնէ , իր յետին մտածումը արդարացնելու համար , որ անպատկառօքն կը դատէ ու կը դատապարտէ , կը նախատէ ու կ'անարգէ իր հոգեւոր պետերը , և դատաւոր կը կանգնի խիղճերու , չվախնալով այն վճիռէն թէ , Մի՛ դաճե՛ գի մի՛ դաճիցի՛ . . . ուստի այդ անիրաւ խժրժանքներու մէնք չպիտի պատասխանենք . անմիտ և անարդար բարութեանք չեն արժէր կայնելու , մոռնելու , պատասխանելու աշխատութիւնը :

Իսկ միւս առարկութիւնը , որովհետեւ արտաքին չպար մը ունի և սեթեւեթեալ (speciosa) է , կ'արժէ փոքր ինչ ի վեր հանել . Իր մոլար ու մոլի կողմը , իր սովեստութիւնը , իր խաղկանութիւնը կը կայանայ ազգայնութեան ոսկեզօծումին մէջ . Ո՛հ ի՞նչ գիւրաւթեք և կլաւսթի՛ վէնք մըն է եղեր այդ ազգասիրութիւնը . . . անիրաւներու

ձեռքին մէջ . Անով ամէն ապրանք , որքան ալ մգլոտած ըլլայ կամ փտած , անցը ունի . անով կը խտրեն , կը շլացնեն տգէտին , ռամիկին , անզգոյշին աչքերը . — Հայութեան դէմ քֆրեր է՝ , ազգասիրութեան դէմ դաւաճաներ է՝ , լատինամոլ է , լատինացած և լատինացնող . . . Օ՛ . . . :

Եւ կը գոռայ դատապարտութիւնը , կը ճայթի շանթը բարկացայտ :

Ո՛րքան անպարկեշտ , ո՛րքան չարամիտ ընթացք :

Ի՞նչ մը քննենք թէ ի՞նչ անազգասիրութիւն , ի՞նչ անպատշաճութիւն կայ , երբ լատինածէս քահանայ մը Ս . Կրթութիւն քարոզէ Հայ-Կաթողիկէ Կղերին :

(Շարունակելի)

Ո Ր Ա Ն Յ Ր Ձ

ԱՌԱՄԵՆ. ՀՈԳԵԼՈՐ ՏԷՐ (*)

Ասեմ, եւ Գերեցանիկ Հոգեւոր Տէ՛ր

Սրտի անպատում ցնծութեամբ է որ կուգանք այսօր միահամուռ Ձեր սրբութեան առջեւ , այս Ս . Կրթութեան առթիւ Ձեր հայրական սիրոյ ու խնամոց մասնաւորապէս առարկայ եղած այդ Ձեր կղերը . կու գանք , Հոգեւոր Տէ՛ր , լի գեղմամբ սրտի . կու գանք , ինչպէս Աստուծոյ մատուցինք ի խորոց սրտէ ,

(*) Զարմացմամբ լուեցաւ որ Մեծմուս , որուն ճշմարտաթոռութեան (!?) ո՛ր աստիճան ըլլալը ամէնուն յայտնի է , հրատարակութիւն մը ըրած է իբրեւ թէ Ս . Կրթութիւն կատարող քահանայիցիքն ոմանք խիստ և յանգիմանական դիտողութիւններ ըրած ըլլան առ Ամեն . Հոգեւոր Տէր՝ իր բռնած իբրեւ թէ սնուղիղ ընթացքին նկատմամբ , և թէ Հոգեւոր Տէրը ազդուած և ցնցուած ըլլայ այս ուժգին ազդարարութիւններէն . Կ'երեւի թէ Մեծմուս վերջերս ա՛լ բոլորովին մէկգի դրեր է որ եւ իցէ լրագրական պարկեշտութիւն , և՛ ըստ առական , սուտը ջուրի պէս կը խմէ և կը խմցնէ . Մեր հրատարակած այդ ուղեւոր որ այն Կրթութիւնը ընող քահանաներուն ստորագրութիւնը կը կրէ՝ ամբողջութեամբ և առանց որ և է բացառութեան , ջախջախիչ պատասխան մըն է , և հանրութեան առջեւ դիմակազերծ կ'ընէ անպարկեշտ թերթ մը , որ սոսեքով կը վիճակի ճշմարտութեան և հոգեւոր Պետերու դէմ :

նոյնպէս և Ձեզի մատուցանելու մեր որդիական եւ խորին շնորհակալութիւնը՝ Ս. Կրթութեանց այս անդուգական եւ արտաքոյ կարգի բարիքին համար, զոր ունեցանք Ձեր Սրբութեան փափուկ եւ զոհաբեր խնամատարութեամբ:

Վստահ եղէ՛ք, Հոգեւոր Տէ՛ր, որ Աստուծոյ Նախախնամութիւնը յատկապէս հաճեցաւ արտակարգ շնորհներովը գործել ի մեզ եւ յարգարել մեր սրտերը իր նորանոր պարգեւներով. եւ կը յուսանք Յիսուսի ողորմութեանէն որ իր Կոյս Մօր բարեխօսութեամբ եւ Ձեր Ս. աղօթիւք պահպանէ ի մեզ ինչ որ հաճեցաւ այս սուրբ օրերուն մէջ ներշնչել մեզ:

Ուստի ամէնքս ի բոլոր սրտէ շնորհակալ ենք Ձեր Սրբութեան այս հայրական խնամոց եւ հոգածութեան համար: Եւ ինչպէս բոլոր Ս. Կրթութեանց օրերուն տեւողութեան ժամանակ Ձեր Սրբութեան դիտաւորութեան համար անարժանաբար աղօթեցինք, նոյնպէս այսուհետեւ ալ պիտի շարունակենք միշտ աղօթել՝ խնդրելով Աստուծոյ ողորմութենէն, որպէս զի Ձեր Սրբութեան շնորհէ երկար կեանք, խաղաղ եւ անվրդով Հայրապետութիւն: Եւ իւր երկնային պարգեւաց առատութիւնը անդադար եւ լիաձեռն հեղու զեղու ամէնուս վրայ, յօգուտ հոգւոց, եւ ի մխիթարութիւն Ձեր հայրական սրտին: Ասոնք են մեր սրտին իղձերն, որուն առհաւատչեայ գրաւականն են եւ պիտի ըլլան, ինչպէս միշտ եւ մահաւանդ այսուհետեւ, այն սերտ կապն եւ միութիւնն որով պիտի ջանանք նոր հոգւով, եւ եւս առաւել Ձեր Սրբութեան շուրջը բոլորուելով, Ս. Քահանայապետին հրամանաց եւ Ձեր Սրբութեան հրահանգաց համեմատ Ս. Եկեղեցւոյ եւ եկեղեցական իշխանութեան սուրբ եւ նուիրական իրաւունքները պահել եւ պաշտպանել ամէն յարձակմանց դէմ, յորում սքանչելի տիպարներ հանդիսացած են մեր բարեյիշատակ նախնիքն:

Այսպէս պիտի գտնէ զմեզ Ձեր Սրբութիւնը, միշտ հաւատարիմ, միշտ հնազանդ, յարգադիր եւ պարտաճանաչ կղեր: Եւ որ-

պէս զի կարենանք յարատեւել, հաճեցէք, Հոգեւոր Տէր, անպակաս ընել մեզի համար Ձեր սրբանուէր աղօթքները, եւ շնորհել մեզի Ձեր աստուածաւանդ Հայրապետական Ս. օրհնութիւնը:

Ամենապատիւ եւ Դերեջանիկ Տէրութեանդ
Ամենախոնարհ ծառայք եւ որդիք
(Կը հետեւին ստորագրութիւնները)
Քաղկեդոն, 2 Օգոստոս 1913

ՂԱՅԻՊ ՕԼՍՈՒՇ ՄԷՍԵՐՈՒԹԷՐ

(Տեւական)

Պու սուրբութիւն օ գըյմէթտար հէտիյէլէր թօրլանըլտրգտան սօնրա, սըրա կէլտի ծնւալը աչմայա, Մէպուս օղլընը գուճաղընա ալտը վէ հէր իքիսի տէ էօրսէլէմէքսիլին գօրտէլալարը տիւրէն վալիտէյի սէյրէ պաշլատըլար: Պիր քիւշիւք քէսէ իշէրիսինտէ շօքօլա, պիր պաշպա քէսէտէ պատէմի շէքէր, ագըլը յօնուզլար իշիւն ախլագի հիքեայիէր նամընտա պիր քիթապ, նիհայէթ պիր գուլթու իշինտէ տէ պիր էօքիւզ վէ պիր մէրքէպ:

Ժօզէֆ էլլէրինի վուրտը:

— Կէօրիւնիւյօր քի քիւշիւք Մնունդ, էօքիւզ իլէ մէրքէպիմ օլմատըղընը պիլիյօր իմիշ...

Էվվէլլիքի սէնէ ամուճասը ժօզէֆէ թէքմիլ պիր մաուր թագըմը հէտիյէ իթմիշտի. ֆագաթ հէր նասըլսա էօքիւզ իլէ մէրքէպ արձանը գօմաղա ունութմուշար:

Բէտէր վէ վալիտէ եէկտիկէրինէ պագըյօր վէ էվլատլարընըն պու գատար մահղուգիլէթինի կէօրմէքլէ քէստիլէրի տէ թէպէսսիւմ իտիյօրլարտը:

— Պապա, տէմէք տիր քի Յիսուս Մանուկ պուընը պիլիյօրմը իտի:

Պապասը ճիտտի պիր թավը իլէ:

— Էվվէթ օղլում, Յիսուս Մանուկ հէր շէյի պիլի, հաթթա սէնին իթաթթըլը օլուպ օլմատըղընը պիլէ պիլի, տէր:

— Պապա, Յիսուս Մանուկ հէր քէպի թանըր մը, սանա նիլիւն հիլ պիր հէտիյէ կէթիլմէմիշ տիր:

Պու սիւալ մէպուսը պիրազ տարա սօգ-
տըղընտան, հէման վալիտէ գարչըլայարապ.

— Յիսուս Մանուկ սէնի թանըտըղը կի-
պի պիզի տէ թանըր, ֆագաթ Ծնունդտա օ-
չօնուգ օլմուշ օլտուղընտան, պու կիւնքի
հէտիյէլէրինի եալընըղ չօնուգլարա կէթիբի:

— Պունը անլատըմ, ֆագաթ Յիսուս Մա-
նուկ պու կիւն պէնիմ իչիւն կէտիյի կիպի,
պապա, աճէպա պիր կիւն տէ սէնին իչիւն
կէլմիշ մի տիր:

Բէտէր ուֆաճը պիր թէպէսսիւմ իթտի:
Պու մասուճանէ սիւալ իւզէրինէ ծնուն ֆիք-
րինէ բէք չօգ իսթըրէլէր վարիտ օլույօր-
լարտը. չօնուգլուղընըն ծնունդ կիւնլէրի...
հէտիյէլէրլէ մէմու ալապ գապլարը... Թը-
ֆըլանէ մէսէրրէթլէր... Ահ, չայէտ վա-
լիտէսի թէքրար տիւնեայա կէլէպիլէճէք օլ-
սա...:

— Էվլէթ օղլում, պէն տէ քիչիւք իքէն
Յիսուս Մանուկ պէնի տէ տիւնլիւնիւր, պա-
նա տա պէօյլէ հէտիյէլէր կէթիբի իտի:

— Աճէպա ծնուն պաճատան աշաղը էնէ-
րէք կէտիյինի կէօրմիշմիսին:

— Հիչ պիր վագըթ, չիւնքի սէնտէ պի-
լիսին քի օ կէօրիւնմէղ:

— Բիւշիւք չօնուգլարա օլան զիյարէ-
թինի պիթիբիտիքտէն սօնրա Յիսուս Մանուկ
նէրէյէ կիտէր:

Պու սիւալա ճէվապէն վալիտէսի,

— Կէօյէ չըպար վէ օրատա տուրուպ,
սէնին ուսլու օլուպ օլմասըղընը սէյլ էյլէր
քի կէլէճէք սէնէ թէքրար էնսին, տէր:

Չօնուղըն պու սաֆտէրուն սիւալլարըն-
տան բէտէր վէ վալիտէ բէք միւթէլէզզիզ
օլույօրլարտը. Բէտէր էլլէրիյլէ ծնուն գըվըր-
ճըզ սաշլարընը օղչայօր վէ չիբին սէօղլէրինի
իչիթաիքտէն սօնրա, ծնը մուհապէթլէ տէ-
րաղուշ էյլէյօրտը:

Նալկահ չօնուղըն սիմասը զարիպ պիր ի-
ֆատէյի միւթէվամմին պիր շէքլ ալարապ,

— Պապա, քրիստոնէական վարդապե-
տութիւն տէրսի ալտըղըմ վագըթ մասմագէ-
լիմ պանա նէ տէրսէ պիլիբմիսին, տէյէ սօ-
րար:

— Խայր:

— Օ տէյօր քի. ֆէնա քիմէլէր պիր
վագըթ Յիսուսա էզիյէթ էթմիշ, ծնը խաչ-
լամըշ վէ խաչըն իւզէրինտէ էօլտիւրմիւշլէր,
պու սահիֆէ մի տիր:

Բէտէր վէ վալիտէ պիրպիլէրինէ պագ-
տըլար. Ժօզէֆին սիմասընտաքի հալ բէք
ղարիպ իտի. Չանն իտէրսին քի օ քէնտինէ
պու գատար կիւզէլ ծնունդ հէտիյէլէրի կէ-
թիբին ճէօմէրտ տօսթընա գարչը ֆէնալըզ
եարմըշ օլանլարտան նէֆրէթ իտիյօրտը:

Մէպուս նէ տէյէճէյինի շաշըրընճա, վա-
լիտէ ծնուն եարտըմընա եթիբիտի:

— Մասմագէլին սանա տէտիյի բէք տօղ-
րու տըր, էվլատըմ. օ կէօրաիւլիւն խաչե-
լութիւնլար հէք Յիսուսըն սօն սաաթընը
կէօսթէրէն ալամէթլէր տիրլէր. լաքին օղ-
լում, ալթիւսթ օլմա, հէր նէ գատար էօլ-
տիւ իսէ տէ, սօնրա թէքրար տիրլիտի. վէ
տարիմա եաշար օլտուղունըն իսպաթը տա շու-
տըր քի իշթէ պու կիւն կէլտի վէ սանա հէ-
տիյէլէր կէթիբտի:

— Էվլէթ, մասմագէլ տէ թամմ պէօյլէ
սէօյլէյօր, ֆագաթ օ պանա տահա պաշգա
շէյլէր տէ նազլ իտիյօր:

— Նէ՞ կիպի:

Ժօզէֆ էլլէրինի գալուշտըրըր վէ սօնրա
ճիտտի պիր թավը իյէ տէր:

— Չանն իտէրսէմ, ֆէնալար Յիսուսը
թէքրար էօլտիւրմէք իսթէրլէր վէ ծնա հէր
տիւրլիւ վահմէթի վէրիլէր:

Պատէհու ինֆիալընը պէյան իտէն կէօղ-
լէրինի բէտէրինէ չէվիլէրէք:

— Պու ֆէնա ատամլարըն քիմէր օլ-
տուղընը անլամագ իսթէրտիմ. պապա, շա-
յէտ սէն ծնլարը թանըրտան պանա տա սէօյլէ:

Մէպուս հիչ պիր ճէվապ վէրմէյօրտը. աղ-
ղընտա սէօղլու գուրումուշտը. սաաթիլ մա-
սումըն սաֆ սիւալը պիր օգ կիպի ծնըն գալ-
պինի տէլմիշտի:

Չիւնքի վէրիլէճէք ճէվապ պէլլի իտի,
եանի «Ֆէնալար քիլիսայա գարչը օլան գա-
նունլարա ինչ վէրէնլէր տիր. ֆէնա զաղէ-
թալարտա մէգալէլէր եազանլար, մէզհէպլէ-
րինի պրագըզ Բիլիսայա գարչը, ծնուն խա-

տէմէլէրինէ վէ բէյիսինէ գարշը իւանը հարպ իտէնլէր տիր» :

Վէ մասամ քի չօճուպ տահա ճէվապ պէքլէյօրաը , մէպուս օ վազթա գտտար գու- ճաղընտա թուլթուլը չօճուլընը եէրէ պրա- գարապ :

— Օլլում , սէն պու ֆէնա տատալարն քիմէր օլտուլընը պիլախէրէ անլայաճապըն : Շիմալիք վալիտէն իլէ պէրապէր սուր տա պէն սէ իշիմէ կիտէյիմ , տէր , վէ չօճուլըն կէօղլէրինտէն բուս իտէրէք եաղըխանէսինէ չէքիլիր :

* *

Օտայա կիրէճէյի վազըթ , դարշը տիվար- տա ասըը օլան վալիտէսինին պէօյիւք ֆօ- թօկրաֆը միւսատըֆը նապար օլուր : Չանն իտէրսին քի իխթիյար վալիտէսի պիր նէվ թէպէսիւմ իլէ օնա պազըյօրաը . . . Օ Մուռնգ կիւնիւ , վալիտէսի պիր թարաֆտան , չօ- ճուլը սիկէր թարաֆտան մէպուսըն սիյրէթի հալինի եիւզիւնէ վուրուհօրլարաը : Իլք Հա- զորգուլթիւն , մէսուտ չօճուլըպ գէմանը . պուռլար մազիյի , վալիտէսինի թանգիլի իտի- յօր . ալիլէնին իւմիտի իսէ էվլատընը եանի իսթիքպալը թէչպի՛ն էյլէյօրաը : Հալպու քի քէնտիսի մազիյէ գարշը սատագաթաը , իս- թիքպալ հազընտա տա նա իւմիտ պիր հալ- տէ գալպէն մուազպապ օլույօրաը :

Պիր միւստէթ օտանըն իշինտէ ոշաղը եօ- դարը եիւրիւտիւ , հայաթընը , շիմալիքի մէս- լէքինի թէպըյիլէյէ մէտար օլաճազ պիր պէ- հանէ արարճապընտ կէչմիշինի թէֆէքթիւր վէ թէխաթթուր էյլէտի : արա սըրա տա կէօղլէրինտէն բէվան օլան կէօղ հաշը տամ- լալարընը սիլէրտի :

Նիհայէթ մասապընը գարշընա օթու- րարապ , պաշընը իքի էլլէրինին արասընա ալար վէ պիր խայը միւստէթ տէրին սիւ- շիւնճէյէ տալար :

Պու մաղմում ֆիքիլլէրտէն սէրինի ազա- տէ էյլէմէք իշիւն , « մէճլիսի մէպուսան » թամալը պիր մէքթուպ քեաղըտը ալար վէ տահա գալէմի թուլթամալան , եալաշ պիր սէս իլէ :

Ճնէ մուլթլու Մուռնգ կիւնիւնտէ Յիսուս

Մանուկա տուա իտէճէք գատար գալպէրի բաք օլանլարա : Ահ օլլում , ճիկէր բարէմ , վազիֆէսինի իյֆա էթմէքտէ օլան մահպու- զիլէթի հիսս էյլէմէք իսթէրսէն , բէտէրինին թարիգինի գաթիէն թագիպ էյլէմէք , տէյէ- րէք մէղմում մէսլէքինտէ թէքրար տէվամ էյլէտի , չիւնքի թուլթմուշ օլտուլը եօլտան կէրի տէճնմէք իշիւն արթըգ վազըթ կէչմիշ իտի :

ՀՐԱՇԱԳՈՐԾ ԱՍՏՈՒԱԾԱՄՈՐ ԿՈՒՍԻՆ ՊԱՏԿԵՐԸ

Համօրէն ազգաց մայրը , Աստուածամայր Կոյան է որ քսան դարերէ ի վեր , ի շնորհս իւր միածին Աստուածորդուն և իւր տիեզե- րահոչակ , Աստուածաշնորհ կուսութեան՝ փա- ռաւորապէս կը թագաւորէ , կը տիրէ , և մայրական գթութեան հովանաւորութեամբ կը խնամէ ամէն ազգ , նա մանաւանդ խան- դավառ ջերմեռանդութեամբ զինք պաշտող և անդադար օրհնաբանող հաւատացեալները : Ահաւասիկ այն անգուգական Աստուածա- մայրն է որ իւր բարիքը և գութը աւելի փայ- լուն և ազդու կերպով կ'ընձեռէ այն հաւա- տացեալներուն՝ որոնց սիրտը և հոգին ջինջ է աշխարհային ցանկութիւններէ , հանգարտ է անոր աղմուկներէն , հեռի է օտար իղձիքէ և կեղբոնացած է մի միայն իր մայրական սրտին Աստուածային սիրոյ հնոցին մէջ : Կը ընձեռէ իրեն յանձնուած գերբնական շնորհաց գանձի առատութիւնը այն մաքուր հոգիներ- րուն որոնք տիւ և գիշեր հետամուտ են իր չքնաղ առաքինութեանց հիւսուածքը լոկի- եայն ընդօրինակելու : Չ'անգոռներ սակայն Ան՝ արդար և սիրաբորբոք հոգւոց խումբին մէջ խառնուած տկար մեղաւորներն ալ որոնց բթացեալ միտքը արծարծելու , քարացած սրտերնին մեղմացնելու և իր սէրը անոնց մէջ ալ բորբոքելու և իւր Աստուածորդուն հետ հաշտեցնելու համար կը գիջանի ի ներ- կայութեան ամենուն երեւնալու , մերթ նշան- ներ արտայայտելու և մերթ պատկերներուն առջև ծնրադիր պաղատող հաւատացելոց բա-

րոյական և նաև նիւթական արտակարգ շը-
նորհներ պարգեւելու :

Անհաւատ, անաստուած, նիւթապաշտ,
անկրօն և թերահաւատ աշխարհը ի զուր
ձգնեցաւ ու կը ձգնի ուրանալու, հերքելու,
և ծաղրելու բոլոր այն հրաշալիքը որ դարե-
բու մէջ գործուած և գործուելու վրայ են
նաև մեր ժամանակները Տիրամօր կուսին
կողմանէ :

Ասոր վկայ են ո՛չ միայն աշխարհիս ամէն
կողմ գտնուող հռչակաւոր սրբավայրերը, ու-
րոնց մէջ Աստուածամօր կուսին կամ մէկ ար-
ձան, կամ մէկ պատկեր կամ իր գորութեամբ
րդխած բնական ջուր մը և կամ առկախ,
ընդ օդս մնալուն մէկ պատկերը և կամ հե-
ռաւոր տեղէ մը ինքնիրեն փոխադրուած
ճիւղ մը կը գտնուի, այլ նաև երեւելի,
գիտուն բժշկաց և արուեստագէտ անձնաւո-
րութեանց գրաւոր վկայութիւնները, և նոյն
խոյն անհաւատ անձնաւորութեանց անպայման
հաստատութիւնները, որոնք մանանխոյ հա-
տին մէկ հարկերերողին չափ ալ հաւատք
չունենալով, մի միայն անձնական շահու և
լոկ հետաքրքրութեան պայմաններովը փորձ
մը ընելով կատարեալ բժշկութեան արժանա-
ցած են Աստուածամօր պատկերի մը կամ
ջրոյ մը ներգործութեամբ : Նպատակս ամե-
նուն ծանօթ եղող Լուրսի, Լօրէթօյի, Ճէն-
նածծանոյի, Բոմբէիի զէպքերը նկարագրել
և կրկնել չէ, որոնք արդէն աշխարհիս
լուսաւորեալ դարերու գիտուններու, ար-
ուեստագէտներու և նոյն խոյ նենգաւէտ չա-
րածճիւններու կողմանէ քանիցս փորձուած և
հակառակ իրենց անհաւանութեանց բացար-
ձակապէս հաստատուած են անուրանալի գո-
յութեամբն ի սքանչացումն մոլոր աշխարհի :

Թէպէտ հեռու աշխարհներէն հայթայ-
թուած, սակայն 80 տարիներէ ի վեր մեր
մէջ հիւրընկալուած, մեղմէ անգիտակցաբար
պաշտուած և շատերուն անծանօթ մնացած
հրաշագործ Աստուածամօր պատկերի մէկ օ-
րինակն է որ յիշել և ի վեր հանել կ'ուզեմ :
Այդ սքանչելագործ պատկերը այո՛ 80 տարի-
ներէ ի վեր ցուցադրուած է բարեպաշտ ժո-
ղովրդեան առջև Ղալաթիոյ Հ. Կաթողիկէ

Յիսուս Փրկիչ Մայր եկեղեցւոյ մէկ խորանին
վրայ :

Միտքս յիշել և յիշեցնել չէ Աստուածա-
մօր «Անուն Մարիամու» յորջորջուած և այն
տիտղոսով նոյն եկեղեցւոյ մէջ հասարակու-
թեանս ծանօթ եղող այն մեծադիր հրաշա-
գործ պատկերը, զոր մէն մի տարի հաւա-
տացեալք ի տօնի Աւետման, իրարու ձեռքէն
ջերմեռանդութեամբ յափշտակելով հանդի-
սաւորութեամբ ի թափօր կ'ելլեն ի յիշատակ
այն մեծ հրաշքին, որ գործուած է մայրա-
քաղաքիս մէջ, երբ համաճարակ ժանտախտը
կը լափլիզէր միջավայրս :

Իմ յիշել ուզածս, այս մեծադիր պատկերի
դրացին է, անմիջապէս զետեղուած Ս. Կով-
սեփայ խորանին վկայ փոքրադիր է նա և
նշմարելի ի մօտոյ :

Էջմիածնական Հայոց կողմանէ Կ. Հայոց
դէմ մղուած վերջին հալածանքի խժոժու-
թիւնները հազիւ վերջացած և կաթողիկէ
կրօնքը հայ ազգին մէջ վերջնականապէս եւ
պաշտօնապէս մուտք ունեցած ըլլալով, 1833ին
Հայ Կաթողիկէ հասարակութիւնս բախտն ու
երջանկութիւնը ունեցած էր առաջին ան-
գամ կառուցանել տալու համար հոյակապ
Յիսուս Փրկիչ Մայր եկեղեցին, որ ներկա-
յապէս գոյութիւն ունի Ղալաթիոյ մէջ իր
անմահ և հսկայ դիրքովը, ճակտին վրայ սա-
կայն անջնջելիօրէն դրոշմուած ունենալով
իրեն ժամանակակից ոխերիմ և մասնիչ հայ
ազգի թշնամւոյ մը վերջին ատելութեան և
վրիժառու ոգւոյն տեսանելի մէկ արարքը :

Այս ժամանակն էր որ նոյն եկեղեցին ու-
նեցաւ յիշեալ փոքրադիր հրաշագործ պատ-
կերին վաւերական մէկ օրինակը, պատրաս-
տուած Խալիթի երեւելի նկարիչ Մարիանօ
Օթթավիանիի վրձինով : Այդ հրաշագործ
պատկերին նախօրինակը Անգոնայի Թագուհի
ամենայն սրբոց կոչուած մայր եկեղեցւոյ մէջ
ընդհանուր յարգութեան առարկայ է և ռաւ-
կօրէն Տիրամայր Ս. Կիրակոսի յորջորջմամբ
խիստ նշանաւոր է, որ 1796 Յունիս 25ին
ամբսներու տեւողութեամբ քառասուն հա-
զար մարդոց խուռն բաղմութեան աչացը առ-
ջեւ կուսական աչքերը ֆիզիկապէս լացած
ու գոցած է :

(Շարունակելի)

ՅԱԿՈԲ Վ. ՄԱՂԱՐԵԱՆ

Ե Ս Թ Ե Ր

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՌԱՍԻՆԻ

Թարգմանեց
ԽԱՅԻԿ Վ. ԱՅԱՆԱՍԵԱՆ

Ա Ն Ձ Ի Ն Ք

Արաւելս,	Թագաւոր Պարսից
Եսրեր,	Թագունի Պարսից
Պուրբէ,	Հօրեղբայր Եսրերի
Համան,	Մտերիմ Արաւելսի
Զոփսարա,	Կին Համանի
Հիդատ,	Պաւսօնեայ Արաւելսի ներքին պալատին
Ասափ,	Այլ պաւսօնեայ Արաւելսի
Էլիզ,	Մտերմունի Եսրերի
Թամար,	Եսրերի հետեւորդներէն մէկը
Արաւելս քաղաւորին պատկանողները	
Նրզգախումբ Իսրայէլացի օրիորդներու	

Տեսարանն և Շոշ ֆաշաֆը, Արաշխի պալատին մէջ

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐՈՒԱԾ

Թաւերաբեր կը ներկայացնէ Եսրերի յարկաբաժինը

Ա. Տ Ե Ս Ս Ա Ր Ա Ն

Եսրեր, Էլիզ

Եսրեր

ԴժՆն ես, Էլիզ, անձկալիդ իմ: Օր երանիկ երջանիկ,
Օրհնեալ ըլլայ Տէրն որ զքեզ զարձեալ ինծի պարգեւեց:
ԴժՆն Բենիամինի տունէն սերած ինծի պէս,
Իմ առաջին տարիներուս եղար ընկեր անբաժան:
Նւ միեւնոյն դաժան լուծին ծանրութեան տակ ճընշըւած:
Ինծի կ'օգնէիր Սիոնի վիշտն ողբալու:
Ո՛հ, ի՜նչ անուշ է զեռ ինծի յիշատակն այդ օրերուն:
Սակայն դուն չէիր գիտեր փառքն ու պատիւն Նաթթերիդ:
Վեց ամիսէն աւելի կայ վնասուել կու տամ ես ըզքեզ:
Ո՛ր կլիմայ, ո՞ր անապատ արդեօք ըզքեզ կը ծածկէր:

Էլիզ

Տիկին, լսելով մահուանը բոթն ողբալի,
Զատուեցայ մարդոյմէ, մենաւոր կեանք մը սկըսայ
Երբ անհամբեր կը սպասէի դառն օրերուս վախճանին,
Մարգարէն յանկարծակի ներշնչումի չեղտերով
«Հերի՛ք, հերի՛ք, ըսաւ ինծի, ողջը ողբաս զերդ մնուել:

«Օ՛ն , ելի՛ր անմիջապէս ինկի՛ր ճամբայ դէպ ի Ծօշ .
 «Հոն , այո՛ , պիտի տեսնես փառքն ու պատիւն Նաթերին .
 «Դահի վրայ չըքեղ բազմած՝ արտասուքիդ առարկան :
 «Սիրտ տուր , աւելցուց նա , սարսափահար ցեղերուդ :
 «Սիոն , կը մօտենայ օրն ուր Աստուած զօրութեանց
 «Իր հըզօր պատսպարիչ բազուկը ցոյց պիտի տայ
 «Աղաղակն իր ժողովուրդին մինչեւ իրեն հասեր է» :
 Ըսաւ ան , և ես ահով ու ցնծումով առլցուն՝
 Կը վազեմ , կը յաջողիմ պալատիդ դուռը գտնել ,
 Ո՛վ չընաշխարհիկ տեսիլ , ո՛վ պերճ յաղթանակ ,
 Արժանի՛ բազկին որ մեր նախահայրերն ազատեց :
 Արտաշէսն ամբարտաւան կը պըսակէ իր գերին .
 Մի Հրէի դստեր ոտքին Պարսիկն հըպարտ կը փարի .
 Ինչպիսի միջոցներով խորհրդաւոր և թաքուն ,
 Այս դէպքը մեծ , անակնկալ երկինք հանեց ի գլուխ :

Եսթեր

Գուցէ լըսած ես թէ յանկարծ ինչպէս ինկաւ երեսէ
 Ասթինէ՛ տիկինը սէգ , որուն աթոռն եմ բազմեր :
 Թագաւորն անոր գէմ լցուած անեղ ցասումով ,
 Հանեց վանեց զայն իր գահէն , առագաստէն արքունի :
 Բայց չը կրցաւ անմիջապէս մտքէն ալ զայն վըտարել .
 Ասթինէ տիրեց յամայր անոր սրտին վշտահար :
 Ուստի հա՛րկ եղաւ փնտռել , ամէն կողմն իր տէրութեան ,
 Նոր առարկայ մը , ձեռնհաս անջատելու զինք անկէ :
 Հընդկաստանէն Հելլէս-Պոնտոս շրջեցան իր գերիներ .
 Ծօշ մայրաքաղաքն Եգիպտոսէն երեւցան .
 Պարթեւին , բիրտ Ըսկիւթին դստերքն անգամ ջանացին
 Խըլելու գեղեցկին ձօնուած մականն արքունի :
 Այն ատեն կը կրթէին զիս միայնակ և թաքուն ,
 Աչալուրջ տեսչութեան տակ ըզզօնամիտ Մուրթքէի :
 Գիտես որ իմ երջանկութեանս ինքն է պատճառ միայնակ :
 Մահը զրկեր էր զիս , աւա՛ղ , իմ պաշտելի ծնողքէս .
 Ինքը զիս նըկատելով իբրեւ զաւակ իր եղբօր ,
 Էլի՛զ , հանդիսացաւ ինծի թէ՛ հայր և թէ՛ մայր :
 Ինք որ գիշեր ցորեկ կ'ողբար տըխուր վիճակն Հրէից՝
 Հանեց , բարձրացուց զիս խորքէն անշուք վիճակիս ,
 Անոնց փրկութիւնն հիմնած տըկար ուժիս վրայ :
 Ըրաւ զիս զխոյութեան բարձր պատուին հետամուտ :
 Իր թաքուն խորհուրդներուն հնազանդեցայ դողահար .
 Մածկեցի սակաջն անունն հայրենիքիս և ազգիս .
 Բայց ո՛վ կրնայ լաւ խելամուտ ընել ըզքեզ դաւերուն ,
 Զորքս հոս կը նիւթէին այնչափ ազգեր նախանձորդ :
 Որ այնքան մեծ շահու համար իրարու հետ մրցելով
 Աչքերէն Արտաշէսի կը սպասէին վըճիռի :

Իւրաքանչիւր ունէր իրեն բարեխօսներն ազդեցիկ :
 Մին կը պարծէր իր հայրերուն դիւցազնական գործերով .
 Միւսն ալ փայլ ու սեթեւեթ տալու համար իր զարդին ,
 Կ'առնուր նպաստ ամենաքաջ ճարտարներու ձիրքերէն :
 Իսկ ես ամէն հնարքներու դարձուածներու տեղ , Էլի'զ ,
 Արցունքներու զոհը միայն կ'ընծայէի Բարձրելոյն :
 Վերջապէս Արտաշէսի հրամանն ինծի ծանուցին .
 Այն հրապարտ ինքնակալին առջեւն ելայ ես , Էլիզ ,
 Աստուած իր հրգօր ձեռքով կը բռնէ սիրտն արքայից .
 Անմեղ հոգիներու յաջողութիւն կը շնորհէ ,
 Եւ հրապարտ ամբարշտին յոյսն ի դերեւ կը հանէ :
 Իմ նուազ գեղոյս վրայ արքան կարծես հիացաւ .
 Լըռիկ ու մնջիկ նըկատեց զիս ընդ երկար .
 Եւ Աստուած , որ կըշիռքի նժարն ինծի միտեցուց ,
 Շարժումներն անոր սրտին կ'ուղղէր անշուշտ այն պահուն :
 Վերջապէս ահեղ արքան քաղցրաժրպիտ ակնարկով
 Ըսաւ ինծի . Դշխոյ եղիւ , և նոյն իսկ այն վայրկենին
 Ճակտիս վրան իրեն ձեռքով զետեղեց թագն արքունի :
 Աւելի ցոյց տալու համար իր ցնծութիւնն ու վառ սէր .
 Մեծամեծներն իր պալատին՝ պարգեւներով ճոխացուց :
 Եւ ամէն գաւառաց մէջ անոր բարիքն յորդառատ ,
 Ժողովուրդն հրաւիրեց իր իշխանաց հարսնիքին :
 Աւա՛ղ , այս ցնծութեան ու խնջոյքի միջոցին
 Ես ի ծածուկ ո՛րքան ամօթ , ի՛նչ դառն վիշտ կը զգայի :
 Եսթեր հագած է , կ'ընէի , զշխոյական ծիրանի .
 Աշխարհի կէտն իրեն առջեւ կը խոնարհի զլիսիկոր .
 Իսկ պարիսպները Սիոնի ծածկըւեր են խոտերով
 Երուսաղէմ , պիղծ , աղանդի սողուններու սրջ ահեղ ,
 Կը տեսնէ իր սուրբ տաճարին քարերն ամբողջ ցիր ու ցան .
 Եւ Աստուծոյն Իսրայէլի տօներն իսպառ դադարած :

Էլիզ


Վշտակեղեք սիրտըդ երբէք բացած չունիս արքային :

Եսթեր

Քո՛յր իմ , արքան մինչեւ այսօր ո՛վ ըլլալուս չէ տեղեակ .
 Այն զոր Երկինք է սահմաներ կեանքիս , բախտիս առաջնորդ ,
 Այս գաղտնիքին մասին լեզուս դեռ կալ և կապ կը պահէ :

(Շարունակելի)

ՀԻՆ ԱՐԺԵՔԱՌՈՐ ՎԱԽԵՐԱԹՈՒՂԹԵՐ



ուսնց ուրիշ գիտողութիւն մը աւելցնելու մեր կողմանէ:

ԵԱՆ. ԽՄԲԳՐ.

Ա. Նամակ

Մասեան 46, Պոզոս Բանաճայս գետ Ե. յամլմ Թ. Նամակ 123. էջ 40:

Սիրելի որդւոյ Զաքարիա Վարդպ.ի,
Առաջնորդ ի Կոստանդնուպոլիս բնակող
Հայոց եկեղեցւոյն,

ՊՕՂՈՍ ԲԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Պոզոս Ե. Արքայան Քահանայապետը, որ Հռոմայ Ս. Աթոռին վրայ բազմած է 1605էն մինչեւ 1621, մասնաւոր յարաբերութիւններ ունեցաւ էջմիածնի Դաւիթ Կաթողիկոսին հետ (1605) և ապա Մելքիսեդեկ Կաթողիկոսին հետ (1593-1623) որ քանի մը անգամ հպատակութեան թուղթ գրած է առ Ն. Առաքելական Արքութիւն, նաև առ Գրիգոր ԺԵ. և Ուրբանոս Ը., իբրեւ առ յաջորդան Ս. Պետրոսի և Փոփանորդ Քրիստոսի, ինչպէս մեր ուղղափառ բազմութիւն Հայրապետներն ըրած էին իբր իրենց ամենուսնախրական մէկ պարտականութիւնը: Անգամ մը Մելքիսեդեկ իր այս նամակները զրկած էր Զաքարիա Վ.ի ձեռք, որ կատարելապէս ուղղափառ էր հասկումով ինչպէս այն ատենները շատ կը գտնուէին թէ՛ Եջմիածին և թէ՛ ի Կ. Պոլիս: Զաքարիայի այս ճամբորդութեան վրայ քիչ բան ունինք աւանդուած տոհմային պատմութեան մէջ: Եջմիածնի դիւանը ուղղութեամբ գոց կը պահուի Հռոմայ հետ կատարուած այս յարաբերութիւններով պատմութեան էջերը զարդարել ուղղով ձեռներեցներու առջեւ: յուսանք որ ժամանակը և անկողնակալութիւնը յաղթեն վերջապէս անիրաւ և անհարկի մոլեռանդութեան և պահուած գանձերը ցուցադրուին բազմատեսչ և ճշմարտաւէր հանրութեան առջեւ:

Առ այսմ Վատիկանու Դիւանի մէջէն գտնուած երեք նամակներու թարգմանութիւնը պիտի հրատարակենք, զորս կը պարտիմք արուեստագէտ հնարայգի մը ջանքերուն, որ բարեացակամ հաճոյակաւարութիւնն ունեցաւ անոնց լատին թարգմանները օրինակելու և զրկելու մեզ կրկին անգամ: Հաճի ընդունիլ մեր հրապարակային շնորհակալիքը:

Այս երեք նամակներէն մին գրուած է վերոյիշեալ Պոզոս Ե. Արքայան Քահանայապետէն առ Զաքարիա Վ., իսկ երկուքը յանձնարարական են:

Նամակներու թուականն է 1613 տարուան Հոկտեմբեր ամիսը և այս իսկ է զարմանալին: Քանզի Քահանայապետին նամակին համաձայն այն տարին Զաքարիա Պոլսոյ Պատրիարք եղած է: մինչդեռ մեր պատմութեան տուեալներուն համաձայն Զաքարիա (Ա. Վատիցի) երկու անգամ Պատրիարք եղած է, նախ՝ 1626—1631, երկրորդ անգամ՝ 1636—1639: Իսկ զարեւել ըստ մեր պատմութեան, 1613 տարուան մէջ Պատրիարք էր Գրիգոր Բ. Կեսարացի (երկրորդ անգամ), որ այս անգամ մնաց յիշատակութեան 1614էն ց 1621, և երրորդ անգամ ալ Պատրիարք եղաւ 1623էն ց 1626, որուն անմիջապէս յաջորդեց Զաքարիա:

Այս կէտը իրաւի մասնագէտ պատմաբաններու ուշադրութեան արժանի է, և մենք իրենց կը թողուք այս կիճիւր հարթելու արժանաւոր հոգն, ա-

Սիրելի՛ որդեակ, ողջոյն եւ առաքելական օրհնութիւն: Զանազան ժամանակներու մէջ քու Մեզի զրկած կրկին նամակներն ընդունեցանք, որոնց մինչեւ ցարդ պատասխանելը յապաղեցինք, որովհետեւ չկար մէկը որուն վստահութեամբ կարենայինք յանձնել Մեր նամակները՝ քեզի բերելու համար: Յիշատակ մեր հայրագուծ սիրոյ աղիք յոյժ խանդավառեցան ու գելան այն բաներէն որ մեզի գրեցիր, եւ որոնք քեզի պատահեցան հագիւ թէ հասած էիր ի Կ. Պոլիս: Սակայն Աստուծոյ՝ Հօրն ողորմութեանց, գոհութիւն կը մատուցանենք, որ զքեզ ամբարշտաց ձեռքերէն սքանչելապէս ազատեց, չարասէրներու խորհուրդները ամօթապարտ ըրաւ և թոյլ տուաւ որ այն որոգայթին մէջ՝ զոր քու ոտքերուդ պատրաստեր էին, իրենք իյնան ու քեզի շնորհեց ընդ փորձութեանն եւ զելան: Իւր անպատմելի գթութեամբ շնորհէ՛ հիմա որ լաւ սկզբնաւորութենէն արդիւնաւորին լաւ արգասիքներ՝ ի փառս իւր Ամենասուրբ անուան եւ ի պատիւ Սրբոյ Կաթողիկէ Եկեղեցւոյ, եւ յիշատակ մեծ յոյս կը տածենք անոր համար որ, ինչպէս կը գրես, այն որ անիրաւաբար զքեզ կը հալածէր եւ Սուրբ Առաքելական Աթոռոյ կը հակառակէր, վաթ առնուեցաւ, ու դուն, եպիսկոպոսաց, քահանայից ու ժողովրդեան միաձայն հաւանութեամբ ձեր ազգին եկեղեցւոյն հոգաւոր շնորհաց աջակցութեամբ կը յուսանք բազմաբեղուն պտուղներ այն եռանդէն, խոհեմութենէն, վարդապետութենէն, որոյ այն-

քան պայծառ ու չքնաղ ապացոյցը տուիր՝ երբ մեր քովը մնացիր։ Ոյր վառն ամենամեծ յօժարութեամբ այն ամէն բանի մէջ, զոր Տերամբ կարող պիտի ըլլանք, պիտի սատարենք քեզ, որպէս զի քու պաշտօնդ աւելի դիւրութեամբ կարող ըլլաս կատարել ըստ Առաքելոյն պատուիրանի։ Որով՝ ինչպէս Մեզմէ խնդրած էիր, մեծաւ փութով յանձնարարեցինք զքեզ մեր նամակով՝ մեր ի Բրիտտոս ամենասիրելի որդւոյն Լուգովիկոսի Գաղղիացւոց ամենաքրիստոնեայ թագաւորին ղեկավարին, նոյնպէս մեր նամակով հրամայեցինք մեր սիրելի որդւոյն՝ Առաքելական Փոխանորդին, որպէս զի սիրով և փոյթեռանդն օգնէ քեզի։ Այն նամակները ներկայիս հետ մէկտեղ կը զրկենք քեզի, որպէս զի զանոնք անոնցմէ իւրաքանչիւրին յանձնեա ինչպէս որ կ'ուզես։ Իսկ ինչ որ կը գրես թէ հոգ տարած ես զրկելու առ յարգելի եղբայրն մեր Մելքիսեղեկ՝ Մեծաց Հայոց Կաթողիկոսը, մեր նամակն զոր մեր ձեռքէն անած էիր, և ասոր համար ձեր ազգէն երկու եպիսկոպոս ճամբայ դրած ես մեր ընծաներովը, այս ամէնը կարի հաճելի եղաւ մեզ։ որովհետեւ մեծ փափաքով կամ ևս աւելի մեծ սրտմաշուքով պատասխանի կը սպասենք ուղղութեան մասին այն երկու մոլորութեանց որոնց համար ըսիր մեզ որ դեռ կան ձեր եկեղեցւոյն մէջ, այսինքն թէ քահանայագործութեան մէջ Ս. Սկիւնին մէջ գինւոյ հետ ջուր չէք խառներ։ և թէ երեքսրբեան փառատութեան մէջ որ խաչեցաւ բառերը կը յաւելուք, որոնք Կաթողիկէ Ս. Եկեղեցիէն Սինոդական վճռով դատապարտուած են։ ուրովհետեւ ինչպէս կրցար իմանալ, այս երկու մոլորութիւնն ալ ուղղելէ առաջ չէք կրնար խոստովանիլ որ յամենայնի միեւնոյն զաւանութիւնը պարզապէս ու կատարելապէս ունենաք Կաթողիկէ Առաքելական Հոռովմէական Եկեղեցւոյ հետ։ Արդ պէտք է որ դուն ալ միեւնոյն բանը հոգ գործադրես, զոր թախանձանօք կը խնդրենք քեզմէ ըստ պարտուց մեր հովուական պաշտաման։ և կը բաղձանք նաև որ կարելի եղածին չափ փութով ծանուցանես մեզ ինչ որ ըրած ըլլաս։

Իսկ մենք բնաւ չպիտի դադրինք քու բարեպաշտ ջանքերդ ու քու աշխատանքներդ Աստուծոյ յանձնելու, միշտ մեր աղօթից մէջ զքեզ յիշելով։ Եւ մեր Առաքելական Օրհնութիւնը, ինչպէս որ մեզմէ թախանձագին խնդրեցիր, մեր սրտին ամենառատ գթութեամբն կը շնորհենք քեզ յօժարակամ։

Տուեալ ի Հոռոմ, առ Եկեղեցւոյն Սրբուհոյն Մարիամն Մաեօր յորոհորէնոյ, ընդ մասակեալ Զկնոռսի, յԺԳ. Կաղանկից Նոյեմբերի (20 Հոկտ.) 1613, Բահանայապետութեան Մերոյ յիմնեորդում ակի։

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՏՕՆԱՅՈՅՑ

Օգոստոս	10	†	Կիր. զմ. Բարեկ. Աստուածածնի	
	11		Բշ. գկ. Ա. or Պահոց	»
	12		Գշ. դմ. Բ.	»
	13		Դշ. դկ. Գ.	»
	14		Եշ. ամ. Դ.	»
	15		Ուրբ. ակ. Ե.	»
	16		Շր. քմ. Շողակաբ:	»

Մ Ե Ծ Ն Ն Ե Բ Ս Է Ս

(Շար. եւ վերջ)

Քիչ մը վերջը Սուրբ զգաց իր թռնաւորուած ըլլալը. բայց չխառնեցաւ. այլ շնորհակալ եղաւ Աստուծոյ իր օրէնքին համար մեռնելու արժանի ըլլալուն համար։ Եւ անապաշաւ թագաւորը զգնումի բերել ուղղով խրատեց զանիկայ և յանդիմանեց անոր փառածար նենգութիւնը։ Աստուծմէ ներում խնդրեց իրեն չարիք ընողներուն համար և ինքզինքը յանձնեց Աստուծոյ։

Ապա սեղանէն ելլելով գնաց եկեղեցին իր պաշտօնավայրը. հեալ գացին շատ իշխաններ և քահանաներ, որոնք ամէն հնարք գործածեցին Սուրբ ապրեցնելու համար, անոր այլեւայլ դեղեր և դեղձափներ տալով. բայց Ս. Հայրապետը յանձն չառաւ օգտուել անոնցմէ, լաւագոյն համարելով մեռնիլ այնպէս, Աստուծոյ օրէնքին և փառքին համար։

Ս. Ներսէս զգալով իր վերջին ժամուն մօտենալը, հրաժեշտի սրտառուչ խօսքեր ուղղեց ներկաներուն. և հուսկ յետոյ պատմեց անոնց իր աքսորուած կըղզւոյն մէջ տեսած անսխլքը, ուր Աստուած իրեն Հայրստանի մէջ պատահելիք դէպքերը և մինչև Նեալին

զայլուստը տիեզերքի մէջ տեղի ունենալիք երեւելի անցուղարձերը յայտնած էր:

Երբ Սուրբը խօսելէ դադարեցաւ, տրիւնը գունդ գունդ սկսաւ բերնէն հոսիլ երկու ժամի չափ: Յետոյ ելաւ Ազօթքի կեցաւ, թողուածին խնդրեց զինք սպանողին համար և շնորհք հայցեց ամէնուն համար: Ներկաները յուզուած փղձկած սկսան լալ: Ապա խնդրեց և ընդունեցաւ Ս. Հաղորդութիւնը և աչքերն ու ձեռքերը երկինք ուղղելով ըսաւ. «Տէ՛ր Յիսուս, ընկալ զհոգի իմ», և աւանդեց հոգին:

Թագաւորը կեղծաւորաբար սուղ բռնեց Ս. Հայրապետին մահուան վրայ և հրամայեց որ մեծ հանդէսով թաղեն զայն: Սուրբին մարմինը փառաւոր թափորով տորին թաղեցին իր ծննդավայրը Թիւ աւանը:

Ս. Շաղիսաւ և Ս. Եպիփանիսը Ս. Ներսէսէն ընդհանրական վերակացու դրուած էին կրօնաստաններու վրայ և կը բնակէին իրարմէ հեռու այլ եւ այլ տեղեր, տեսան ցորեկ ատեն Ս. Հայրապետը որ ամպերէ և հրեշտակներէ շրջապատուած, կը փայլատակէր լոյսի պէս և երկինք կը վերանար:

Ս. Ներսէս Հայրապետական Աթոռին վրայ մնաց ըստ ոմանց քսան, իսկ ըստ այլոց երեսուն և չորս տարի և վախճանեցաւ ՅՅ3ին: Աւանդութիւնը կ'ըսէ թէ քառասունն օր իր գերեզմանին վրայ լուսոհղէն սիւն մը երեւցաւ. և հոն շատ հրաշքներ տեղի ունեցան:

Սուրբին գերեզմանը թէպէտեւ ատեն մը անյայտ եղաւ, բայց յետոյ նորէն յայտնուեցաւ և մինչև հիմա ուխտատեղէ է:

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Դիրք Ա. — Գլ. ԺԳ. — Փորձաբիւցներու դէմ կեցաւ լաւ վրայ:

Բանի որ աշխարհիս վրայ կ'ապրիմք, առանց նեղութեան ու փորձութեան չենք կրնար ըլլալ:

Ուստի գրուած է Յոքայ մէջ. «Երկրիս վրայ մարդուն կեանքը փորձութիւն է»:

Անոր համար պէ՛տ էր ամէն մեկուն մեծ զգուշութիւն ունենալ իր փորձութիւններուն շուրջ, եւ հսկել աղօթքներով, մի՛ գուցէ քցեստիմ Տեղի զօնէ խաբէրու, որ յնաւ չհամար, հապա կը ջրջի փնտռելով քեզ զո՛վ կրէ:

Ո՛չ ոք այնչափ կասարեալ է եւ սուրբ, որ երբեմն փորձութիւն չունենայ. եւ չենք կրնար յոյրոյնին անոնցմէ ազատել:

ՍՈՒՐԲ ՍԻՐՏ ՅԻՍՈՒՍԻ

ԳԼՈՒԽ Գ.

Սուրբ Սուրբ ջերմեռանդութեամբ վախճանը

Հ. Տէրն մեր այս ջերմեռանդութիւնը հաստատելով ինչ ընդհանուր վախճան ունեցեր է:

Պ. Հոգիներու և Ընկերութեան մէջ թագաւորելու վախճանը:

Յօդ. Ա. Յիսուսի քաղաւորութիւնը հոգիներու մէջ:

Հ. Իր թագաւորութիւնը հոգիներու մէջ հաստատելու համար ինչ կը խնդրէ մեզմէ Տէրն մեր:

Պ. Կը խնդրէ մեզմէ երախտագիտութիւն, հասուցում և նմանողութիւն:

1. Երախտագիտութիւն

Հ. Ինչով պիտի կարենանք երախտագէտ ըլլալ զէպի Տէրն մեր ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ:

Պ. Յաճախակի դնելով զմեզ ներկայութեանը իր աստուածային Ս. Սրտին, ԱՅՆ ՍՐՏԻՆ ՈՐ ԱՅՆԲԱՆ ՍԻՐԵՑ ՄԱՐԴԻԿՆԵՐԸ, ա՛յն Սրտին որ միշտ լի է մեզի համար զթով, խանդաղատանքով ու առատաձեռնութեամբ. նաեւ պէտք է բարեպաշտօրէն խորհինք իր անհուն բարեբարութիւններէն ամէն մէկը:

Հ. Մեր Տիրոջ մեղի ըրած բարեբարութիւններէն զլիաւորները որո՞նք են:

Պ. Մարդկութեան բարիքը, որով Աստուծոյ Որդին զգեցաւ մեր բնութիւնը՝ հաղորդ բնելու համար զմեզ իւր աստուածային բնութեան. — Փրկագործութեան բարիքը, որով նա խաչի նախատալից ու դառն չարչարանքը կրեց՝ քաւելու համար մեր մեղքերը և արդիւնաւորելու համար մեզի փրկութեան շնորհները. երկրպագելի Ս. Հաղորդութեան բարիքը, որով նա մեզի հետ կը բնակի միշտ և ի կատարած աշխարհի, և ինքզինքը մեզի կու տայ այս Ս. Խորհրդոյն մէջ:

Հ. Կա՞ն արդեօք ուրիշ բարիքներ որոնց յիշատակութիւնը պիտի մզէ զմեզ ՅԻՍՈՒՍԻ Ս. Սրտին մատուցանելու Սէր փոխանակ սիրոյ:

Պ. Այո՛, կա՛ն հոգեւոր ու ժամանակա-
ւոր բաղիքներու անհասանալի շարքը որոնք
կը շնորհուն մեզ մեր կենաց ընթացքին մէջ .
միրտութիւն , քրիստոնէական դատարարա-
կութիւն , կոչում , յարատեւութիւն են . .
(Շարունակելի)

ԳԱԹՕԼԻԲ ՄԵԶԷՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ (*)

(Տեղամի)

Արեւիկայի իրաւագրւոր

Եւլանճը աշխարհին , Ալլահն վարըղընա
ինանմանագ վէ , տահա աօղըրուսը , ծնուն էմը
իթտիքլէրինի եարմագ մէճպուրիյէթինաէն
գուրթուլմագ իչիւն իյճատ իթտիքլէրի իթի-
րագլարըն քեհաֆէսի շու իքի իթիրագա
իֆրաղ օլունապիւր . 1. Ալլահը կեօրմէյօրը .
2. Ալլահը Անլայամայը :

1. Պէն եւլընը կեօղիւմ իկ կեօրսիւ-
յիւմէ ինանըրմ , վէ մասամ քի Ալլահը կեօ-
րմէյօրմ , քոյի իսէ Ալլահ եօգ սըր , տէրէր .
Փագաթ պունլարա սօրմալը տըր քի ,
Աֆրիգայը կեօրմիւշմիւսինի . Ամերիգայը ,
Ուկեանիայը կեօրմիւշմիւսինի . Պօնալարթը ,
պէօյիւք ճէտուլէրինի կեօրմիւշմիւսինի .
Սաաթլարընընըն ալէթլէրինի եարմա սա-
նաաթլարընը կեօրմիւշմիւսինի . Սիգի եա-
շաթան , շու թէնէֆիւս իթտիյինի հաւայը
կեօրիւյօրմուսընը . իսպէրլէրի պիր սիւ-
րաթը պէրգըյէ իլէ , թէլէկրաֆ թէլլէրինէ
կէչէրէք , թա տիւնեանըն օ պիր ուճունա
նաղլ իտէն մայի լէլէթրիքի կեօրմիւշմի-
սինի . Պարութ վէ եա տինամիթ իչինտէ
մէվճուտ օլարագ , էն տէրթ գայալարը պիլէ
բարչա բարչա իտէն գուլվէթի կեօրմիւշմի-
սինի . Տահա նէ՛ գատար շէյլէրէ ինանըյօր-
պընը քի գաթիէն կեօրմիւշմիւսինի , մա մա-
ֆիյն ծնլարըն էսէրինի կեօրմիւշմիւսինի իչիւն
վարըղլարընա տագայիլ օլույօրսունը :

Պէօյլէ տէ պիլ , պու տիւնեատէ նա միւ-
թէնահի պիր իլմին , հուտուտուպ պիր գուլ-
վէթին էսէրլէրինի կեօրմիւշմիւսինի իչիւն ,

Ալլահն վար օլտուղունա ինանըյօրը . Տօղ-
րու տըր քի Ալլահ պիր սաֆ ու սատէ բուհ
օլտուղը միւնասիպէթլէ , ծնը թէն կեօղլէրի
իլէ կեօրմէ գապիլ սէյիլ սիւ . չիւնքի սաֆ
պիր բուհ նէ՛ կեօրիւլիւր , նէ՛ թէմաա իտի-
լիւր վէ նէ տէ հասսէլէրլէ հիսա օլունուր .
Փագաթ մէվճուտ օլան պիր շէյի անլամագ
իչիւն ինանըն պիւրսէն գիյաւէ վաւըթալարը
եօգ մի տըր :

Ինան իտրաքա մալիք տէյիլմի տիր .
Իտրաք իսէ գիյանըն կեօղլէ կեօրիւնտիւլիւ
կիպի , ֆիքրէ ալան օլան վէ եախօտ պիր
մանթըք նէթիճէսինտէ թէճէլլի իտէն հագի-
գաթը պէտահէթլէ կեօրմէ՛ մի . Եւլընը
կեօղլէրի իլէ կեօրմէք իսթէյէնլէր , ինանը
հայվանաթա միւսալի պիր բատտէյէ թէնիլ
իտէրլէր . Աճէպա գուլագլարընը գիյայը հիսա
իտէմէտիքլէրի իչիւն գիւսա եօգ մը տըր տէր-
սինի . Աճէպա պիր քէօր քիմսէ կիւնէլի
կեօրմէտիյի իչիւն ծնուն վարըղընը ինքեար
իտէպիլմի մի . Պէօյլէ տէ թէն կեօղլէրի իլէ
կեօրիւլէմէյէն Ալլահ աղլ ու իտրաքա կեօ-
րիւլիւր , քէնտի էսէրլէրիլէ թանըլըր :

Միսիճնէրին պիրի պիր պէտէվի արագա
«Ալլահն մէվճուտիլէթինէ նիչիւն ինանը-
յօրսընը» տիլէ սօրտուղընտա , պէտէվի՛
«գուլ իւլէրինտէ ալագ իլլէրի կեօրմիւ-
յիւմաէ , պուրաւսան կէչէն օլմուս սըր տէ-
րիմ , պէօյլէ տէ թապիւթըն իսարիգալարընը
կեօրմիւշմիւսինի , պուրատան պէօյիւք պիր
տէհա , պիր Աղլ միրուր իթմիշ տիր վէ պու
պէօյիւք Աղլ ու տէհա իսէ նա միւթէնահի
Ալլահ տըր տէրիմ» , ճէվապընը վէրմիշ տիր :

Մէշահիրի թապիւյունտան պէօյիւք Լիմնէ
տալի «տիւնեանըն իսպարիգի արասընտան
էպէտի , նա միւթէնահի , հէր շէյէ գատիր ,
իտրապը միւրէմէլ ոահիպի պիր Ալլահ կեօ-
կէսի կէչմիշ օլտուլընը կեօրմիւմ , գանու-
գէտէ օլտուլ վէ ծնա սէճտէ էյլէտիմ» տէ-
միշ տիր :

Հիմնայէ .— Տահա ետգըլարտա , հիշ տէյիլ իսէ
եիւլ եաշընտա պիր իիլ իեար եաշալօրտը . Պիւթիւն
էօրիւնիւ թաշիլ իլէ կէչիւրմիշ օլան պու իթիլար ,
Ֆրանսանըն վէ հաթթա տիւնեանըն էն ալիմ զաթ-
լարընտան պիրի պուլունտն Շըվրէօլ իտի :

Սուրէթի ալէնիլէտէ Ալլահա տուա էյլէտիլի

(*) Տես թիւ 405, էջ 478.

կենդանի պիտանեմ, երբմի ետալարընտա կենճ պիտ զեզ-
վէք օնա «տեմէք սիգ Ալլահա խանը յօրսունըզ, հեշ
օնը կէօրսիւշիւնիւզ վա՞ր մը» տէյինճէ, ինթիլայր
ճէվապէն Ելվվէթ, տէլիգանլը, էվվէթ, պէն Ալլահը
կէօրսիւշիւմ, լաքին օ սատէ պիտ բուճ օլմազ իթի-
պարըլա հատաը զաթընտա կէօրսիւշիւմիլինտէն,
պէն օնը քէնտի էւէրլէրինտէ կէօրսիւշիւմ, Երլարզ-
լարըն ճէստմէթ վէ հարէքէթլէրինին սիւրաթընտա
պէն Ալլահըն հէր շէյէ գատիտ գուարէթինէ, պէնի
միւթէնտիմ էլլէտիլ լուճ ֆլարտա, օնուն նիհայէթ-
սիգ էլլիլինին, քէսլինաթըն կիւզէլ ինթիլգուսընտա
օնուն իլմինի վէ պիբայան ֆէրասէթինի կէօրսիւ-
շիւմ Աճէպա սիգ պուշլարը կէօրսիւշիլինինիլ, էյ
տէլիգանլը, իլլիգաթըն շու կիւզէլ թապլուսընը թէր-
սիմ էլլէյէն ռէստմը իյաճիլի, տիւնիւնըն շու մու-
հայիլի էլ ուզուլ օլան մաքիտաթընը խտարէ էլլէյէն
սէմալի մաքիլինիլ կէօրսիլմընընը: Եայէտ սիգ
պուշլարը կէօրսիլմընընը, աճընաճաք պիտ հայաէ
պուշլուշուլարընը, տա հա տօղլուսու սիգ քէօլսիլիկ
եօլընտա իտարէի քէլամ էլլէմէսի իւզէրինէ, զէվվէք
տէլիգանլը պաշընը էլլիպ սափուշուպ կիտէր:

(Մապաշի վար)

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՒՄ ԵՒ ԿԱՅՈՂՆԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Վատիկանի Զուլեցիւրիացի գունդին մէջ վերջերս
պատահած ըմբոստութեան վրայ գրած էինք մեր ան-
ցեայ թիւով: Վսեմ Կարդինալ Մէրի տէլ Վալ նա-
մակ մը զրեց առ գնդապետ Բլեօն, որ ամբողջ գուն-
դին առջեւ կարգացուեցաւ: Վսեմ Միքանաւորը կը
դատապարտէր անհնադանդութեան արարքը, և կը
յայտնէր յայտ մասին Նորին Արքութեան զգացած
մեծ ցաւը:

Այս նամակին ընթերցումէն վերջը անձնապաճ
գունդը կազմողներէն ոմանք արտաքսուեցան և ոմանք
ստիպուեցան հրաժարիլ և մեկնեցան. և ամէն բան
վերադարձաւ նախկին խաղաղութեան և կանոնաւո-
րութեան:

Զուլեցիւրիոյ ամէն կողմերէն Ս. Քահանայապետին
ուղերձներ կը դրկեն՝ իրենց ցաւը արտայայտելու հա-
մար եղած անպատեհ արարքին առթիւ:

Մեծին Կոստանդինուսի կայսեր մօրը՝ Ս. Հե-
ղինէի տօնին առթիւ մեծ հանդիսութիւններ կա-
տարուած են Արա-Չէլիի Աստուածածնի եկեղեցւոյն
մէջ, որ կառուցուած է Կապիտոլինի գագաթը՝ Կա-
պիթոլեան Արամզդայ մէհանին տաւրակներուն վրայ:
Հանգէաներուն նախագահած է Վսեմ Կարդ. Բոմբիլի
Հռոմայ Քահանայապետական Փոփոխորդը:

Ք. Ամէն շարաթ անընդհատ կը հասնին ուխ-

տաւորաց խումբեր ի Հռոմ, Կոստանդինեան Յորեւեա-
նին առթիւ:

Ս. Այս տարի բովանդակ աշխարհի մէջ ցարդ-
չանեալած էլեւել մը կը տիրէ ժողովրդոց մէջ՝ Ամե-
նասուրը Կուսին Մարիամու երեւելի ուխտատեղինե-
րու ալցելելու, ուր յոգնախուռն և երամ երամ կը
գիմեն հաւատացեալք բոլոր Եւրոպայի մէջ: Ասոնց
մէջ գլխաւորն է Լուբաի ուխտագնացութիւնը. հա-
րիւր հազարներ կը փութան հոն ամենահեռաւոր
վայրերէն իսկ, ինչպէս Հոլանտայէ, Անգղիայէ, Ամե-
րիկայի ամէն կողմերէն, մինչեւ իսկ Աւստրալիայէ:

Մեր բարի ժողովուրդը որ միջոց չունի այսպիսի
ձեւերով արտայայտելու իր ջերմեւանդութիւնն ու
որդիական վատհոլութիւնն առ Տիրամայր Ս. Կոյս,
թո՛ղ աւելի արտագին ու պաղատողին կատարէ իր
ուզգափառ նախնիքներէն իրեն կտակուած այս բա-
րեպաշտութիւնը, ըլլա՛յ նոյն իսկ քիւզի մը խոնարհ
մատուռին մէջ, արգոտած Աստուածամօր մէկ պատ-
կերին... Միշտ կ'ընդունի որդեսէր մայրը...

ԱՅ ԿԱՅՈՂՆԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Հոգեւոր Ս. Կրթութիւնները, որոնց Ամենապ. և
Գերեմը. Հոգեւոր Տէրն հրաւիրած է Աւագ Թեմիս
Կղերը, այսօր աւարտեցաւ Երկու շրջանի բաժնուած
էին Գեր. Քահանայք, ժողովրդապետութիւնները ա-
ռանց Հոգեւոր պաշտօնէի՝ չձգելու կանխամտածու-
թեամբ: Ս. Կրթութիւնը կատարուեցաւ Քաղկեդոնի
Ֆրէրներու դպրոցին մէջ, առ այս յաւկեցուելով ա-
մենամեծ սրահը. քարոզիչն եղաւ սրբակեաց և աստ-
ուածախօս Հ. Լըպօն, Յիսուսեանց կարգէն, որ հա-
յապէս և հայասէր է միանգամայն ՅՅ. Քահանայք
առանց բացառութեան, արտաքոյ կարգի գո՛հ մտա-
ցին այս Ս. Հրահանգէն և իրենց շնորհակալութիւնը
մատուցին առ իրենց օրինաւոր Հովիւը:

ԷԶՄԻԱԾՆԱԿԱՆ ՀԱՅԵՐ

Ժամանակէ մը ի վեր Արշարունի Պատրիարքին ու
զինքն ընտրողներու մէջ գծտութիւնը անհաճոյ հան-
գամանք մը առած էր: Պատրիարքը շէր կրցած, բը-
նականաբար, հաճելի ըլլալ ամէնուն, որ էական պայ-
ման մըն է էջմիածնական եկեղեցականներուն, նոյն
իսկ ամենէն բարձր դիրք ունեցողներուն, պաշտօնա-
վարութեան, որ բացարձակապէս կախումն ունի աշ-
խարհականներէն. — և ամկավարական եկեղեցի, թէեւ
Քրիստոս և Առաքիտներ այդպիսի բան ո՛չ ուսուցին
ո՛չ ճանչցան: Վերջապէս, ուրեմն, անվայել պատճա-
ռանքներ յերկրելով՝ զորս իրենց թերթերն անգամ
ցաւով ի վեր կը հանեն, ստիպեցին իրենց Պատրիարքը
հրաժարելու. և հրաժարեցաւ, հազանդելով ժողո-
վրդեան կամքին, որ ինք զինքը՝ նոյն իսկ Քրիստոսի
նկեղեցւոյնմէջ և յԱստուծոյ արուած հոգեւոր իշ-
խանութեան միակ տէրը կը հռչակէ, ինչպէս արմա-
տական-և ամկավարական-ընկերվարական — անիշխանա-
կանները՝ կը քարոզեն թէ չկայ իշխանութիւն ի վե-

բուս, այլ ժողովրդեան միտքն... Առաքելայր բոսժ է. ո՛չ ուստի է իշխանութիւն եթ ոչ յԱսուծոյ և Ս. Հարք սորվեցուցին թէ կողմուած իշխանութիւնը Աստուծոյ ներկայացուցիչն է և Անդէ՛ միտքն կախուածն ունի...

Ուրեմն Առաքելական Ուղղափառ Եկեղեցին անկախ է ժողովրդական կամքէ և ստիպումէ...

Ուրեմն ժողովրդական կամ առկա վարական Եկեղեցի՝ հակառակելական է...

Ինչպէս կը մտածէ արդեօք էջմիածնական սարուկ եկեղեցականութիւնը:

Նանքի մէջ կը զրուի թէ ռուսահայ թերթեր կը հաւաստեն թէ «Ռուսիոյ կառավարութիւնը առաջարկել է Էջմիածնին՝ այսուհետեւ ծխական գաղութներին համար ուսուցիչներ հրաւիրելիս՝ առնել նա հանգական իշխանութեան համաձայնութիւնը, այսինքն նախապէս հարցնել թէ արդեօք վերջինս ոչինչ չունի՞ հրաւիրած ուսուցչի դէմ... Թիֆլիսի թեմական առաջնորդի վերջին շրջաբերականից: Ուղղած Հոգաբարձութիւններին, երեւում է որ Էջմիածնի պետ մասնամասնից առաջ լռիկ մնացիկ նամակայնութիւնն է ուել կառավարութեան պահանջին...

«Յիրաւի շատ գէշ նշաններ են որ տեսնում են Էջմիածնի կողմից ժողովրդական մի կարեւոր իրաւունք սահմանափակում է Էջմիածնի համաձայնութեամբ:

«Եւ մենք էլ հարցնում ենք ձեզ. Կաթողիկոսին Հորիզոնի հետ, թէ սխիշ բարեյական հիմունքներով է ղեկավարում Էջմիածնը մեր ազգային գործերը տնօրինելիս...» Զիջողութեան հիմունքներով: Այդ էր որ սպասում էինք նոյն Կաթողիկոսից մենք, նրան ընտրողներու երբ մեր քաւն տւինք նրան...

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Օտմ. Կառավարութիւնը Խորհրդէի կուսակալութեան մէջ կը շարունակէ ամէն քաղաքական կարգադրութիւնները կառարելադրութիւն և որոշած է ո և է գնով բնաւ չվճարել այդ քաղաքը, որ թէ՛ պատ...

մական, թէ՛ վարչական, թէ՛ ռազմագիտական և թէ՛ վաճառականական տեսակէաներով ամենակարեւոր է Օտմ. Կաթողութեան իբր տնտեսական մի մաս: Յամաւորէն կը շրջաբերուէր վերջերս թէ մեծ տէրութիւնը իրենց Պոլսոյ դեսպաններուն ձեռքով պիտի տղարարեն թողուլ զԵմիածնէ և քաշուել Միտիւնոս գիծին ապին: ցարդ բնաւ տեղի չունեցաւ նրամտնորինակ դիմում մը, և ինչպէս բանգէտ շրջանակներու մէջ կը հաւաստուէր, տեղի պիտի չունենայ: Նոյնպէս անհիմն կ'երեւին շրջաբերուած ենթադրութիւնները թէ Ռուսիա կամ Ռուսմանիա ծախային կամ ցամաքային ցոյց մը պիտի կատարեն, թուրք կառավարութիւնը ստիպելու համար: Ոչ որ կ'ուզէ այժմ Գերմանիան գրգռել և Եւրոպան աղէտի մը մատնել:

Հեռագիր մը կ'ըսէ թէ Պաշարէպի մէջ հաշտութիւնը կնքուէր և պատերազմիներու մէջ, կը հաւաստուէր սակայն թէ արուած որոշումները չպիտի կնքան վաւերական նկատուելի, առանց միջադատին վեհաժողովի մը, զոր այժմէն իսկ մեծ տէրութիւնը կը խորհի գումարել:

Վայրթիոյ սակարանին մէջ օսմանեան արժեթուղթերը կարեւոր բարձրացումներ ունեցան: Մասնաւորապէս բարձրացան Րուսիոյ երկաթուղիի պարտութեւ զԵմիածնը, որոնց գինը 187.12էն մինչեւ 188.50 ելու: մէկ տնգամէն 4.38 Փրանք վրայ դնելով: Այս պարագան կը վերագրուի թուրքիոյ դիւանագիտական յաջողութիւններուն: Խորհրդէի խնդրին մասին, որուն առթիւ կը հաւաստուէր թէ տէրութեանց կողմէ այլ եւս ո՛չ մէկ դիմում պիտի կատարուի Բ. Գրան մօտ:

Առջի օր սուլթանական իրատէով վաւերացուեցաւ Երեստատի Րէժիի մենաշնորհին 25 տարի երկարաձգման վերաբերող պայմանագրութիւնը: Այս երկարաձգումը պիտի սկսի առաջիկայ Ապրիլ 30էն:

Իդիլի մէջ քոլերայի տաւը դէպքեր պատահեցան մինչեւ շարժութ օր, ասոնցմէ երեքը մահացու են:

Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	497
Ուղերձ առ Ամեն. Հոգեւոր Տէր	499
Ղայիպ օլմուս մէտերէրլեր	500
Հաւազորձ Ասուածաւօր Կուսին պատկեր	502
Եսթեր	504
Հին արժէքաւոր վաւերաբնութիւն	507
Եօթնեակ Բիստոնէի	508
Սուրբ Սիրս Զիսուսի	509
Գաթոյի Մեզնէպի էսասլար	510
Տեղեկագրական	511


ՇՐՏՈՒՄՆԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

ՏՆՈՐԷՆԻՄ ԱՄԴՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵՐԶԻՄԱՆԵԱՆ

Տպագր. Է. Արձագանց Երաբարեթի, Բերալ Պայեմ վաղց քիւ Ե. Պոլիս



ԲԱՅԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Ծառիկոյ համար, տարեկան՝ 40 դիկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ քիւ՝ 1 դիկ.:—Սրտաստիման՝ տար. ժր. 10. վեցամս. 5.—Վհարմունք կանխիկ են:
ՀԱՍՏԷ.—Կարողիկե Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ.—1.—Արձագանգ կը նրաստակաւի Շաքաթ օրերը: 2.—Խմբագրութիւնս պատա-
ւորեալ չէ անպատեալ իսկ նոյնութեամբ նրաստակելի իրեն ղրկուած ու եւ է յօդուած: 3.—Կեղծանունով ղրկուած
յօդուածներու հեղինակը կ'ը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին: 4.—Ձեռագիրներ եւ չեն
դարձուիր: 5.—Յօդուածներու ձեռագիրները պէտք է գրուած թղթին մէկ կողմը միայն: 6.—Ծանուց-
մանց համար մասնաւոր պայմանագրութիւնք կը կատարուին: 7.—Հասցէի փոխախաւքեան համար պէտք է անհրա-
ժեշտ երկու քանեկանի նամակադրո՞ւմ ի միասին լինել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկե Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ուս անենայնի հոխ եւ ի վիճակի է
որ եւ իցէ տպագրական գործոց համար: Կը սպուին ամէն տեսակ ծանուցումներ, զիբեր, տեսներ, հրահրագիրներ,
հարդեր, հարդ-ատեմներ, մահագրներ, եւն., եւն.: Գիրքեր ամմրցելի կերպով աման են: Դեղեցկագիտական հա-
տակի եւ տպագրական մատուցեան կողմանէ յանախորդներ անտարակոյն զո՞հ պիտի մնան:

ԿԸ ԾԱՆՈՒԻ «Տարական Ակբունք Բիւսոնեական Վարդապետութեան» հոստատեալ եկեղեցական իօխա-
նութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Դիմ, ամուր թղթակազմը 2 դիկն.:
